ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

"08." սեպտեմբերի 2022 թ. N ՀՏՆ/12.4/06.8-2022

«Լեոպոլդ և ընկերներ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Բադալյանին
ՀՀ ք. Երևան Արաբկիր 39/1ա, ՀՎՀՀ 00106947
Էլ. Հացե leopoldevllc@gmail.com

Հարգելի՛ պարոն Բադալյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և «Լեոպոլդ և ընկերներ» ՍՊԸ-ի միջև (այսուհետ՝ Կապալառու) 09.02.2022 թվականին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն կնքվել է «ՃԴ-ԲՄԱՇՁԲ-2021/1Շ-2» ծածկագրով ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման պետական գնման պայմանագիր /այսուհետ՝ Պայմանագիր/, որի շրջանակներում Կապալառուի կողմից ներկայացվել է Պայմանագրի և որակավորման ապահովումներ՝ տուժանքի ձևով:

Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, Պայմանագրի 8.13 կետի համաձայն օրենսդրությամբ սահմանված կարգով Կապալառուին ներկայացվել է համաձայնագիր կնքելու, բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի, կամ բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքի ձևով որակավորման և բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ, սակայն Կապալառուի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել վերոնշյալ փաստաթղթերը:

Հիմք ընդունելով, որ Կապալառուն խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները համաձայն Պայմանագրի 8.13 կետի և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 12-րդ և 17-րդ ենթակետերի դրույթներով՝ Նախարարությունը միակողմանի լուծում է «ՃԴ-ԲՄԱՇՁԲ-2021/1Շ-2» ծածկագրով Պայմանագիրը:

Հայտնում ենք, որ Կապալառուի նկատմամբ կկիրառվեն ՀՀ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Ընկերության տվյալներն օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվի ընկերությանը սպասարկող բանկ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված 900005000758 և 900008000664 գանձապետական հաշվեհամարներին փոխանցելու նպատակով:

9/8/2022

X

ԱՐԹՈՒՐ ԵՐԻՑՅԱՆ

Signed by: YERITSYAN ARTUR 1609770064

Հարգանքով՝
Ա. Երիցյան

Կատարող՝ Ա. Մարտիրոսյան
Գնումների համակարգման և կազմակերպչական վարչություն
Հեռ.(010) 511-329
Էլ. փոստ՝ m.martirosya@mta.gov.am

Կապարող՝ Ա. Մարտիրոսյան
Գնումների համակարգման և կազմակերպչական վարչություն
Հեռ.(010) 511-329
Էլ. փոստ՝ m.martirosya@mta.gov.am